Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հունիսի 11 -ի N 379 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՆՈՐ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ Շիրակի մարզի մինչև 14 տարեկան երեխաներին անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն տրամադրելու նպատակով կառուցել ժամանակակից պայմաններին համապատասխանող ատամնաբուժական և ակնաբուժական բժշկական հաստատություն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ծրագրի շրջանակներում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով այլ արտոնություններից
3.	Բարեգործը	Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք, 381 Պարկ ԱվենյուՍաութ)
4.	Ծրագիրը կատարողը	«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն, իրավաբանական հասցեն՝ քաղ. Երևան, Նորքի այգիներ 180, ՀՎՀՀ՝ 01533153
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաք, բնագավառը՝ առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	337,386,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Շիրակի մարզի մինչև 14 տարեկան երեխաները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Նախատեսված է ծրագրի իրականացումն սկսել 2019 թվականի հունիսի 3-ից և ավարտել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2019 թ. մշակել կառուցվելիք շենքի ճարտա-րապետաշինարարական նախագծային փաստաթղթերը, մշակված նախագծային փաս-տաթղթերը համաձայնեցնել իրավասու մարմինների հետ, ավարտին հասցնել շենքի շինարարական աշխատանքների հիմնական մասը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2020 թ. ապահովել շենքի շահագործման փաստագրումը, սարքավորումներով հագեցումը և կահավորումը: Նշված միջոցառումների իրականացման համար 2019 թ. հունիսի 3-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը նախատեսված են ֆինանսական միջոցներ՝ 337,386,000 դրամի չափով, որոնք, ըստ ուղղությունների, բաշխված են հետևյալ կերպ՝ 1) էսքիզային նախագծի մշակում և դրա հաստատում՝ 1,250,000 դրամ. 2) նախագծային աշխատանքներ և նախագծի փորձաքննություն, այդ թվում՝ գնային առաջարկի փաստաթղթերի պատրաստում՝ 6,000,000 դրամ. 3) հեղինակային հսկողություն՝ 1,750,000 դրամ. 4) շինարարական աշխատանքներ, այդ թվում՝ նյութերի, սարքավորումների ձեռքբերում, կահավորում, թույլտվությունների և համաձայնությունների ստացման, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքեր, վճարներ և այլն՝ 328,386,000:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Օգտվելու ենք տարբեր մատակարարող կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններից՝ 1) կնքվելու են պայմանագրեր՝ էսքիզային նախագծի մշակման և դրա հաստատման համար՝ 1,250,000 դրամ. 2) կնքվելու են պայմանագրեր՝ նախագծային աշխատանքների և նախագծի փորձաքննության պատրաստման համար՝ 6,000,000 դրամ.

		3) կնքվելու է պայմանագիր՝ հեղինակային հսկողություն իրականացնելու համար՝ 1,750,000 դրամ. 4) կնքվելու են պայմանագրեր՝ շինարարական աշխատանքների կազմակերպման համար, այդ թվում՝ նյութերի ձեռքբերում, սարքավորումների ձեռքբերում, կահավորում, թույլտվությունների և համաձայնությունների ստացման, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքեր, վճարներ և այլն՝ 328,386,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Բարեգործության ոլորտը համակարգող լիազոր մարմին, Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողով, ՀՀ Շիրակի մարզպետարան, Գյումրու քաղաքապետարան, անշարժ գույքի կադաստրի կոմիտե
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Հովարդ Կարագյոզյան» հիշատակի ընկերակցություն (ԱՄՆ) և «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ-ի անդամներին ամսական և տարեկան հաշվետվություններ ներկայացնելը, ՀՀ օրենսդրության շրջանակներում Գյումրու քաղաքապետարանի կողմից ծրագրի իրականացման ընթացքի ուսումնասիրություն, ՀՀ պետական եկամուտների կոմիտե ՀՀ օրենքով սահմանված հաշվետվություններ (հաշվարկներ) ներկայացնելը, ծրագրի իրականացման ընթացքի մասին տեղեկությունների հրապարակում՝ զանգվածային լրատվության միջոցներով, ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով՝ լիազորված մարմին հաշվետվություններ ներկայացնելը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ